

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

ԱՌԱՔԵԼՑԱՆ ՍԱՄՎԵԼ ԿՆՅԱԶԻ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ Գարուշի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գրիգոր Միքայելի Բաղիրյան

իրավաբանական գիտությունների
թեկնածու
Միքայել Արմենի Մինասյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի մարտի 16-ին ժամը 14.30-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, ք. Երևան, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Մեղմագիրն առաքվել է 2015 թվականի փետրվարի 13-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**

Ա. Հ. Խաչատրյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: «Սահմանադրական դատավարություն» եզրույթը ՀՀ սահմանադրական իրավունքի համար հանդիսանում է համեմատաբար նոր և իրենից ներկայացնում է դատական իշխանության իրացման ինքնուրույն կազմակերպարավական ձև:

ՀՀ սահմանադրական դատավարությունն օժտված է բազմաթիվ առանձնահատկություններով, որոնց շնորհիվ այն ձեռք է բերում դատավարության ինքնուրույն տեսակի կարգավիճակ: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ընդլայնվեց սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, որը նոր լիցք հաղորդեց սահմանադրական դատարանի գործունեությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով ամրագրվեցին սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման նոր առանձնահատկություններ, որոնք արդյունավետ լուծումներ առաջարկելուց բացի նոր հարցեր և խնդիրներ բարձրացրեցին ինչպես իրավակիրառողների, այնպես էլ գիտնական-իրավաբանների համար:

«Սահմանադրական դատավարություն» եզրույթը համալիր տեսական իմաստավորման կարիք ունի: Դրա հիմքում դրվում են որոշակի սկզբունքներ, որոնք սահմանադրական դատարանին տալիս են առանձնահատուկ կարգավիճակ՝ ի տարբերություն այլ դատարանների: Բացի այդ, սահմանադրական դատավարության միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք պաշտպանում են իրենց սահմանադրական իրավունքներն օրենսդրից կամ իրավակիրառողից: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում 2011 թվականի հոկտեմբերի 26-ին կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնք առնչվում էին, ինչպես սահմանադրական դատարանի որոշումներին ներկայացվող պահանջներին, այնպես էլ դրանց իրավական հետևանքներին:

Այս հանգամանքներով պայմանավորված անհրաժեշտ է վեր հանել ՀՀ սահմանադրական դատավարության փուլերին բնորոշ, դատավարության հիմքում ընկած սկզբունքների իրացման առանձնահատուկ բնույթը, այդ ոլորտում առկա բացթողումները, օրենսդրական կարգավորումների թերությունները և գտնել դրանց համար անհրաժեշտ և արդյունավետ լուծումներ, ինչն էլ, իր հերթին, վկայում է ատենախոսության թեմայի արդիականության մասին:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Մույն թեկնածուական ատենախոսության նպատակն է ձևավորված տեսական հայացքների, օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայի համակարգային վերլուծության հիման վրա բացահայտել սահմանադրական դատավարության մեջ առկա հիմնախնդիրներն իրավական կարգավորման մեջ, հիմնավորել որոշակի գիտագործնական առաջարկներ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատավարության կատարելագործման ուղղությամբ:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

- 1) սահմանել սահմանադրական դատավարության հասկացությունը,
- 2) վերլուծել սահմանադրական դատավարության հիմքում դրված սկզբունքների դրսևորման առանձնահատկությունները,
- 3) ընդգծել սահմանադրական դատավարության սուբյեկտների դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները,
- 4) բացահայտել կոնկրետ և վերացական վերահսկողության դատավարական առանձնահատկությունները,
- 5) վերլուծել սահմանադրական դատարանի որոշումներում իրավական փաստարկման առանձնահատկությունները,
- 6) բացահայտել իրավակիրառական պրակտիկայի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում ամրագրված իրավակարգավորումների իմաստով,
- 7) ուսումնասիրել սահմանադրական դատարանի անդամի հատուկ կարծիքի ինստիտուտի ազդեցությունը սահմանադրական դատավարության զարգացման գործընթացի վրա:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:

Չնայած այն հանգամանքի, որ այլ երկրների բազմաթիվ իրավագետների՝ Ս. Բայրամովի, Դ. Բասանովի, Ա. Բեգուզովի, Ս. Սոլդատովի, Ֆ. Ատրայի, Ս. Բերտեայի, Ս. Ռոզենի, Վ. Ջորկինի, Ն. Վիտորուկի, Ն. Լազարևի, Բ. Էբգեևի, Ա. Ռոժկովի և այլոց, ինչպես նաև հայ իրավագիտության ներկայացուցիչների՝ Գ. Հարությունյանի, Գ. Դանիելյանի, Լ. Ալավերդյանի, Ա. Մանասյանի, Լ. Ղազարյանի՝ սահմանադրական դատավարության առանձին հարցերին՝ սկզբունքներին, սահմանադրական դատարանի որոշումներին, դրանց կատարման հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ հետազոտություններ են կատարվել, որոնք, ի թիվս այլ հետազոտությունների, կազմել են ատենախոսության տեսական հիմքը, սակայն հետազոտված չեն ՀՀ սահմանադրական դատավարությունը՝ որպես դատավարության ինքնուրույն տեսակ, դրան բնորոշ առանձնահատկությունները, 2006 թվականին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով ձևավորված նոր իրողությունները, ինչպես նաև 2011 թվականի հոկտեմբերի 26-ին «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նոր երաշխիքների նախատեսումը:

Հետազոտության ընթացքում ընդհանրացվել, վերլուծվել և մեկնաբանվել են վերը նշված հեղինակների գիտական մոտեցումները թեմային առնչվող վիճահարույց հարցերի վերաբերյալ:

Ատենախոսության իրավական և փորձառական (Էմպիրիկ) հիմքը: Ատենախոսության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ մի շարք այլ պետությունների սահմանադրությունները և ընթացիկ օրենսդրությունը, սահմանադրական դատարանների որոշումները, սահմանադրական դատարանների իրավակիրառական պրակտիկան:

Ատենախոսության ընդհանուր մեթոդաբանությունը և հատուկ մեթոդները:
Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական, ֆորմալ-իրավական, կառուցվածքային-գործառնական) մեթոդները: Այս մեթոդների օգտագործումը հնարավորություն է տվել ոչ միայն բացահայտել որոշակի հիմնախնդիրներ ՀՀ սահմանադրական դատավարության իրավական կարգավորման ոլորտում, այլ նաև մշակել համապատասխան առաջարկներ՝ սահմանադրական դատավարությունը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու նպատակով:

Ատենախոսության գիտական նորույթը: Թեկնածուական սույն ատենախոսությունը Հայաստանի Հանրապետությունում տվյալ հիմնախնդրի վերաբերյալ առաջին համալիր գիտական հետազոտությունն է: Ատենախոսության մեջ տրվել է հեղինակի՝ սահմանադրական դատավարության առավել ամբողջական բնորոշումը, վեր են հանվել ՀՀ սահմանադրական դատավարության հիմքում ընկած սկզբունքների իրացման, դատավարության ընթացակարգային բարեփոխումներին առնչվող առանձնահատկությունները, բացահայտվում են սահմանադրական դատարանի կողմից իր որոշումներում կիրառվող իրավական փաստարկների տեսակները և դրանց նշանակությունը, վեր են հանվել սահմանադրական դատարանի որոշումների կատարման որոշ հիմնախնդիրներ, որոնց հիման վրա ներկայացվում են նաև օրենսդրության կատարելագործման կոնկրետ առաջարկներ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Առաջարկվում է սահմանադրական դատավարության հետևյալ բնորոշումը. «Սահմանադրական դատավարությունը սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերը քննելիս և լուծելիս սահմանադրական դատարանի և այլ սուբյեկտների միջև ծավալվող իրավահարաբերությունների և դատավարական գործողությունների ամբողջություն է, որը կարգավորվում է հատուկ դատավարական նորմերով և ուղղված է պետության և հասարակության մեջ սահմանադրականության հաստատմանը»:

2. Առաջարկվում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը դիտարկել որպես սահմանադրական դատավարության ինքնուրույն փուլ: Քանի որ սահմանադրական դատավարության փուլը սահմանադրական դատարանի և մասնակիցների գործողությունների հարաբերականորեն ամբողջական համակցություն է, որը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածի ընթացքում և ուղղված է կոնկրետ իրավական խնդրի լուծմանը, ուստի օրենսդիրն այս փուլին առնչվող կարգավորումներ նախատեսելիս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ սահմանադրական դատարանը պետք է հնարավորություն ունենա իր լիազորությունների շրջանակներում արդյունավետորեն լուծելու այս փուլի առջև դրված խնդիրը:

3. Անհրաժեշտ է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար օրենսդրորեն ամրագրել կրկին սահմանադրական դատարան անհատական սահմանա-

դրական դիմում ներկայացնելու հնարավորություն, եթե սահմանադրական դատարանն անհատական սահմանադրական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժում է դիմումն ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Դիմումն ակնհայտ անհիմն գնահատելու չափանիշները կապված են դիմողի սուբյեկտիվ ընկալումների հիման վրա դիմումը բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորելու հետ: Նշված պայմանների առկայությունը դեռ չի նշանակում, որ սահմանադրական իրավունք չի խախտվել. պարզապես դիմողի կողմից այն չի հիմնավորվել, և չի նշանակում, որ առկա չէ պատճառահետևանքային կապ վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, որը նույնպես, պարզապես, դիմողի կողմից բավարար կերպով չի հիմնավորվել: Նման իրավիճակում սահմանադրական դատարանն այս հիմքով անհատական սահմանադրական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու դեպքում պետք է իր որոշման պատճառաբանական մասում այնպիսի փաստարկում ներկայացնի, որը հնարավորություն կտա դիմողին, հասկանալու, թե ինչպես պետք է դիմողը բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի սահմանադրական իրավունքների խախտումը և ցույց տա պատճառահետևանքային կապը:

4. Դատարանների կողմից սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է դիտարկել որպես դատարանների պարտականություն: Դատարանները, եթե արդարադատություն իրականացնելիս կիրառման ենթակա օրենքի դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու որևէ հիմնավոր կասկած է առաջանում, պարտավոր են դիմել սահմանադրական դատարան: Դատարաններն իրավասու չեն օրենսդրի կողմից ընդունված օրենքի պահանջն անտեսել լայն հայեցողության արդյունքում, քանի որ նրանց վրա դրված է օրենքներին համապատասխան արդարադատություն իրականացնելու պարտականություն:

5. ՀՀ սահմանադրական դատավարության առանձնահատկություններից են հանդիսանում դրա հիմքում դրված սկզբունքների իրացման շրջանակները: Մասնավորապես՝ սահմանադրական դատավարության շրջանակներում օրինականության սկզբունքի կիրառման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ սահմանադրական դատարանը պարտավոր չէ անվերապահորեն կատարել օրենքի պահանջը և կարող է իր գործունեության ընթացքում մինչև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթի կիրառումը գնահատել դրա սահմանադրականությունը և որոշել դրա կիրառման նպատակահարմարությունը, իսկ ՀՀ Սահմանադրությանը հակասող դրույթներ հայտնաբերելու դեպքում, անտեսելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, անմիջականորեն կիրառել ՀՀ Սահմանադրության պահանջները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի վերնագրում ամրագրված է կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, սակայն մեր կարծիքով ՀՀ սահմանադրական դատավարությանը բնորոշ է կողմերի իրավահավասարության սկզբունքը, որը երաշխավորում է

կողմերին հավասար հնարավորություններ ամբողջությամբ ներկայացնելու իրենց իրավական դիրքորոշումը սահմանադրաիրավական վեճի առնչությամբ: Մրցակցության սկզբունքը սահմանադրական դատավարության շրջանակներում ունի խիստ սահմանափակ կիրառություն և չի հանդիսանում սահմանադրական դատավարության հիմնական սկզբունքներից մեկը:

Առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության սկզբունքները: Սահմանադրական դատարանը պարտավոր է գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի հիման վրա իրականացնել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ անկախ կողմերի ներկայացրած իրավական փաստարկներից և դիրքորոշումներից: Գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի բովանդակության մաս պետք է դիտարկվի նաև սահմանադրական դատարանի հնարավորությունը ճշգրտումներ կատարել սահմանադրական դատավարության կանոնների մեջ:

6. Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել սահմանադրական դատարանի մատչելիության սկզբունքը, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն կտա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմել սահմանադրական դատարան և ստանալ իր գործի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումը: Այս մոտեցումը, կարծում ենք, համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը, ըստ որի՝ «Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը»: Սահմանադրական դատարանի մատչելիությունը պետք է երաշխավորվի յուրաքանչյուրի համար, անկախ նրանից թե այլ սուբյեկտներ կոնկրետ սահմանադրաիրավական վեճի առնչությամբ նախկինում սահմանադրական դատարան դիմել են, թե ոչ, որպեսզի հնարավոր դառնա անհատական շահերի արդյունավետ պաշտպանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում պետք է լրացումներ կատարվի, որոնք սահմանադրական դատարանին հնարավորություն կտան, մերժելով անհատական դիմումի հիման վրա գործը քննության ընդունումը, միաժամանակ իր դիրքորոշումն արտահայտել կոնկրետ գործի շրջանակներում օրենքի վիճարկվող դրույթն այլ մեկնաբանությամբ կիրառելու փաստի վերաբերյալ, որը նույնպես նոր հանգամանք կհանդիսանա դատական ակտը վերանայելու համար:

7. Առաջարկվում է սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումներում կիրառվող փաստարկների հետևյալ դասակարգումը՝ սահմանադրական դատարանը կիրառում է ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային փաստարկներ: Սակայն այդ փաստարկները պետք է ուղղված լինեն ոչ թե օրենքի դրույթը կոնկրետ իրավիճակին հարմարեցնելուն, այլ դրույթը մեկնաբանելուն, որը հավասարապես կիրառելի կլինի այլ իրավիճակների նկատմամբ: Սահմանադրական դատարանը, ելնելով իր կողմից լուծվող խնդիրների առանձնահատկություններից, իր որոշումներում առավելապես կիրառում է բովանդակային փաստարկման տեսակը, քանի որ նրա համար անխուսափելի է իրա-

վական նորմերի մեկնաբանումը: Սահմանադրական դատարանն ինքն է որոշում կիրառվող փաստարկների շրջանակը՝ հստակեցնելով լուծման ենթակա խնդիրները: Դատարանի կողմից կիրառվող փաստարկներից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի իրավական համակարգի համար և ուղղված է կոնկրետ հասցեատերերի:

8. Առաջարկվում է իրավակիրառական պրակտիկայի հետևյալ բնորոշումը՝ իրավակիրառական պրակտիկան իրավունքի որոշակի նորմերի ընկալման և կիրառման վերաբերյալ մշակված կանոնն է, որը բազմաթիվ անգամներ կիրառվել է համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերի նկատմամբ: Իրավակիրառական պրակտիկայի բնորոշումը կարևոր է այն պատճառով, որ սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես վիճարկվող ակտը կամ դրա դրույթը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական արդյունքները կարող են օգտագործվել բոլոր այն դասընթացներում կամ հետագա գիտական հետազոտություններում, որոնք որևէ կերպ կառնչվեն սույն հետազոտության թեմային: Հետազոտության մեջ ներկայացված առաջարկները կարող են կիրառվել ՀՀ սահմանադրական դատավարությունը կանոնակարգող օրենսդրությունը կատարելաործելու նպատակով, ինչը լուրջ գործնական ազդեցություն կարող է ունենալ սահմանադրական դատավարության միջոցով սահմանադրական իրավունքերը և ազատությունները պաշտպանելու համար:

Հետազոտության արդյունքների ներդրումն ու փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը կատարվել է Ռուս-Հայկական (Մլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնում, որտեղ իրականացվել են աշխատանքի քննարկումն ու գրախոսությունը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսության կառուցվածքը ձևավորվել է ուսումնասիրվող թեմայի առանձնահատկությունների, ուսումնասիրության առարկայի և նպատակների հաշվառմամբ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ մեր կողմից հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են նպատակներն ու խնդիրները, հետազոտության իրականացման գիտական մեթոդները, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, այն հիմնական աղբյուրները, որոնք հիմք են հանդիսացել ատենախոսությունը շարադրելու համար:

Ատենախոսության՝ **«Սահմանադրական դատավարության հասկացությունը և սուբյեկտները»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: **«Սահմանադրական դատավարության հասկացությունը և փուլերը»**

վերտառությամբ առաջին ենթագլխում տրվում է սահմանադրական դատավարության հասկացությունը, բնորոշ գծերը, համեմատական վերլուծության են ենթարկվում տարբեր հեղինակների կողմից տրված «սահմանադրական դատավարության» բնորոշումները:

«Մահմանադրական դատավարության սուբյեկտները» վերտառությամբ երկրորդ ենթագլուխը նվիրված է սահմանադրական դատավարության սուբյեկտների կարգավիճակին:

«Մահմանադրական դատարան ներկայացվող դիմումների առանձնահատկությունները կոնկրետ և վերացական վերահսկողության շրջանակներում» վերտառությամբ երրորդ ենթագլխում քննարկվում է, մի կողմից, անհատական սահմանադրական դիմումների և դատարանների կողմից ներկայացվող դիմումների և, մյուս կողմից, վերացական վերահսկողության շրջանակներում այլ սուբյեկտների կողմից ներկայացվող դիմումների առանձնահատկությունները:

Ատենախոսության՝ «Մահմանադրական դատավարության սկզբունքները»

վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից: «Մահմանադրական դատավարության սկզբունքների հասկացությունը» վերտառությամբ առաջին ենթագլուխը նվիրված է սահմանադրական դատավարության հիմքում դրված սկզբունքներին, որտեղ հետազոտվում են սահմանադրական դատավարության սկզբունքների՝ տարբեր հեղինակների կողմից տրված սահմանումները, սկզբունքների դասակարգումները՝ հիմնված տարբեր չափանիշների հիման վրա: «Մահմանադրական դատարանի մատչելիության սկզբունքը» վերտառությամբ երկրորդ ենթագլուխը նվիրված է դատարանի մատչելիության սկզբունքին, որտեղ քննարկվում է օրենքով նախատեսված պայմանները, անհատական սահմանադրական դիմումները վերադարձնելու, այս դիմումների հիման վրա գործի քննությունը մերժելու չափանիշները: «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ երրորդ ենթագլխում տրվում է օրինականության սկզբունքի վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա բնորոշումները, օրինականության սկզբունքի բովանդակությունը կազմող տարրերը: «Մրցակցության և իրավահավասարության սկզբունքները» վերտառությամբ չորրորդ ենթագլխում քննարկվում է նշված սկզբունքների կիրառման առանձնահատկությունները ՀՀ սահմանադրական դատավարության շրջանակներում: «Գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը» վերտառությամբ հինգերորդ ենթագլուխը նվիրված է գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի բովանդակության բացահայտմանը: Այս սկզբունքի հիման վրա սահմանադրական դատարանին տրվում է հատուկ դերակատարություն:

Ատենախոսության՝ «Մահմանադրական դատարանի որոշումների իրավական փաստարկման, կատարման և իրավահիշատակական պրակտիկայի որոշ հիմնահարցեր» վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: «Իրավական փաստարկման հիմնախնդիրը ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների շրջանակներում» վերտառությամբ առաջին ենթագլխի շրջանակներում ուսումնասիրվում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կիրառ-

վող փաստարկները: «Մահմանադրական դատարանի որոշումների կատարման որոշ հիմնախնդիրներ» վերտառությամբ երկրորդ ենթագլուխը նվիրված է սահմանադրական դատարանի որոշումների կատարման որոշ հիմնախնդիրներին: «Իրավակիրառական պրակտիկայի սահմանադրաիրավական բովանդակությունը «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի իմաստով» վերտառությամբ երրորդ ենթագլխում ընգծվում է իրավակիրառական պրակտիկայի կարևորությունը սահմանադրական արդարադատության լիարժեք իրականացման հարցում: «Հատուկ կարծիքի ինստիտուտը ՀՀ սահմանադրական դատավարության շրջանակներում» վերտառությամբ չորրորդ ենթագլուխը նվիրված է սահմանադրական դատավարության շրջանակներում հատուկ կարծիքի դերի և նշանակության հստակեցմանը:

Ատենախոսության հիմնական եզրահանգումները: Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա արվել են ներքոհիշյալ եզրահանգումները՝

- Մահմանադրական դատավարությունը սահմանադրական դատարանի և այլ սուբյեկտների միջև ծավալվող իրավահարաբերությունների և դատավարական գործողությունների ամբողջություն է, որն իրակացվում է սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերը քննելիս և լուծելիս և որը կարգավորվում է հատուկ դատավարական նորմերով ու ուղղված է պետության և հասարակության մեջ սահմանադրականության հաստատմանը:

Դատական սահմանադրական վարույթի վերաբերյալ սահմանադրական իրավունքի գիտությունը մշակել է բազմաթիվ դրույթներ, որոնք թույլ են տալիս խոսել իրավունքի նոր ճյուղի սահմանադրական դատավարական իրավունքի ձևավորման մասին: Մահմանադրական դատավարական իրավունքը՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ առանձնացնելու անհրաժեշտության մասին են խոսում հետևյալ փաստարկները.

- դատավարական բազմաթիվ նորմերի առկայությունը, որոնք միջնորդում են բազմաթիվ սահմանադրական իրավահարաբերություններ և հանդես են գալիս որպես նյութական սահմանադրական նորմերի իրացման կառուցակարգեր,

- սահմանադրական դատավարական հարաբերությունները կարգավորող ընդհանրացված նորմատիվ աղբյուրների գոյությունը (Մահմանադրական դատարանի մասին օրենք, սահմանադրական դատարանի կանոնակարգ),

- հատուկ տեսակի արդարադատական մարմնի գործունեության կանոնակարգումը սահմանադրական դատավարական նորմերով,

- սահմանադրական դատավարության հատուկ ընթացակարգային ձևը, դատավարության այդ տեսակի արդյունքում ընդունվող եզրափակիչ որոշումների հատուկ բնույթը:

- Մահմանադրական դատավարության փուլը կարելի է բնութագրել որպես սահմանադրական դատարանի և մասնակիցների գործողությունների հարաբերականորեն ամբողջական համակցություն, որը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածի ընթացքում և ուղղված է կոնկրետ իրավական խնդ-

րի լուծմանը: Սահմանադրական դատավարության յուրաքանչյուր փուլ ունի առանձնահատուկ բնույթ՝ պայմանավորված իրավահարաբերության օբյեկտով, փուլի մասնակիցների սուբյեկտային կազմով և դատավարական գործողությունների նպատակով: Վերոգրյալի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերլուծության հիման վրա հիման վրա կարելի է առանձնացնել ՀՀ սահմանադրական դատավարության հետևյալ փուլերը.

- ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումի նախնական ուսումնասիրություն կամ դիմումի ձևական պահանջների ստուգում,
- դատական կազմի կամ սահմանադրական դատարանի լիազուրկում կազմի կողմից գործի քննության ընդունելության հարցի լուծումը,
- գործը դատաքննության նախապատրաստելը,
- դատական քննությունը,
- խորհրդակցական սենյակում քննարկումը, քվեարկությունը և ըստ էության որոշման ընդունումը,
- որոշման հրապարակումը և ուժի մեջ մտնելը,
- ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը (որոշակի վերապահումներով):

- Սահմանադրական դատավարության սուբյեկտն այն պետական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը սահմանադրադատավարական իրավունքի նորմերի ուժով օժտված է սուբյեկտիվ դատավարական իրավունքներով և պարտականություններով և դրանք իրացնում է սահմանադրական դատավարության ընթացքում: Սահմանադրական դատարանը սահմանադրական դատավարության սուբյեկտների մեջ ներառելն օբյեկտիվորեն արդարացված է այն տեսանկյունից, որ սահմանադրական դատավարությունը պետք է ներառի դրա շրջանակներում գործող բոլոր մասնակիցներին: Սահմանադրական դատավարության մասնակիցների իրավական կարգավիճակի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ նրանք օժտվում են դատավարական իրավասուբյեկտությամբ: Անկախ նրանից, թե կողմը դիմողի, թե պատասխանողի կարգավիճակ ունի սահմանադրական դատավարությունում, անհրաժեշտ է, որ նրանցից յուրաքանչյուրն օժտված լինի սահմանադրադատավարական իրավունակությամբ, այսինքն՝ սահմանադրական օրենսդրությամբ նախատեսված հնարավորությամբ ձեռք բերելու դատավարական իրավունքներ և, համապատասխանաբար, կրելու պարտականություններ: Ֆիզիկական անձանց մոտ սահմանադրադատավարական իրավունակությունը ծագում է ծննդյան պահից, իսկ մյուս սուբյեկտների (հանրային իշխանության մարմիններ, իրավաբանական անձինք) մոտ ստեղծման (կազմավորման) պահից: Որպես պետական մարմինների սահմանադրական դատավարական իրավունակության ճանաչման պայման է հանդես գալիս նրանց իրավասությունը, որով նրանք օժտվում են իրենց իրավական կարգավիճակը սահմանող ակտերով ստեղծման պահից մինչև դրանց վերացումը: Սահմանադրական դատավարական գործունակությունը պատկանում է չափահասության (18

տարեկան) տարիքի հասած ֆիզիկական անձանց: Հանրային իշխանության մարմիններին և իրավաբանական անձանց սահմանադրական դատավարական գործունակությունը, ինչպես սահմանադրական դատավարական իրավունակության առնչությամբ, ծագում է դրանց ստեղծման (կազմավորման) պահից, այսինքն՝ դատավարական իրավունակությունը և գործունակությունը ծագում են միաժամանակ, ինչի առնչությամբ որպես սահմանադրական դատավարությանը նրանց մասնակցության հիմք կարելի է դիտարկել այնպիսի ինտեգրող իրավաբանական հասկացություն, ինչպիսին սահմանադրական դատավարական իրավասուբյեկտությունն է:

- Անհատական սահմանադրական դիմումը կարելի է բնութաբերել որպես սահմանադրական դատարան ներկայացված դիմում, որով վիճարկվում է կոնկրետ գործով ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, որը, դիմողի կարծիքով, խախտում է իր սահմանադրական իրավունքները և ազատությունները, որոնք հնարավոր են վերականգնել միայն սահմանադրական դատավարության արդյունքում օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող կամ սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու միջոցով: ՀՀ Սահմանադրության 42.1 հոդվածի ուժով սահմանադրական դատարան կարող են դիմել նաև իրավաբանական անձինք: Սակայն իրավաբանական անձանց միայն իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն տալը, մեր կարծիքով, կհանդիսանա Սահմանադրության 42.1 հոդվածի և 101 հոդվածի 6-րդ կետի սահմանափակ մեկնաբանություն, ինչը կխախտի իրավաբանական անձանց իրավունքները: Նման մեկնաբանությամբ ստացվում է, որ սահմանադրական դատարան կարող են դիմել իրավաբանական անձինք միայն այդ դեպքերում, երբ կիրառված օրենքով շոշափվում են իրավաբանական անձի իրավունքները: Մինչդեռ, մեր կարծիքով, իրավաբանական անձինք պետք է հնարավորություն ստանան դիմելու սահմանադրական դատարան նաև այն դեպքերում, երբ ընդհանուր իրավասության դատարաններում հանդես են եկել իրենց անդամների իրավունքների պաշտպանությամբ: Եւս մեկ դեպք է առկա, երբ իրավաբանական անձինք, իրենց կանոնադրական նպատակներին համապատասխան, հանդես են եկել այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ: Նման իրավիճակում թեև անմիջականորեն իրավաբանական անձանց նկատմամբ չի կիրառվում օրենքի դրույթը, սակայն այս դեպքում ևս իրավաբանական անձինք պետք է կարողանան սահմանադրական դատարանում վիճարկել այլ անձանց նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Անհատական սահմանադրական դիմումի առարկան, որը կարևոր նշանակություն ունի դիմումի հիման վրա գործը քննության ընդունելու հարցը լուծելու ժամանակ, հանդիսանում է այն տարրը, որն անհատականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները: Դրանում է կայանում դի-

մումի առարկայի առանձնացման գործնական նշանակությունը:

Դիմումն ակնհայտ անհիմն գնահատելու չափանիշների բովանդակությունն ինչ բխում է, որ անհատական սահմանադրական դիմումի ընդունելությունը պայմանավորվում է դիմողի սուբյեկտիվ ընկալումների հետ բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորելու առնչությամբ: Նշված պայմանների առկայությունը դեռ չի նշանակում, որ սահմանադրական իրավունք չի խախտվել, պարզապես դիմողի կողմից այն չի հիմնավորվել, և չի նշանակում, որ առկա չէ պատճառահետևանքային կապ վիճարկվող օրինադրությի և իր իրավունքների խախտման փաստի միջև, որը նույնպես, պարզապես, դիմողի կողմից բավարար կերպով չի հիմնավորվել: Նման իրավիճակում, մեր կարծիքով, կարող է սահմանադրական դատարանի մատչելիության սահմանափակման վտանգ առաջանալ, ուստի գտնում ենք, որ սահմանադրական դատարանն այս հիմքով անհատական սահմանադրական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու դեպքում պետք է իր որոշմամբ նաև դիմողին հուշի, թե ինչպես պետք է դիմողը բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի սահմանադրական իրավունքների խախտումը և ցույց տա պատճառահետևանքային կապը: Բացի այդ, օրենսդրորեն իրավաբանական և ֆիզիկական անձանց համար պետք է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում կրկին անհատական սահմանադրական դիմում ներկայացնելու հնարավորություն նախատեսվի: Նույնիսկ ՀՀ սահմանադրական դատարանն է իր 17 մարտի 2009թ. ՄԴԱՌ-21 որոշման 9-րդ կետում արձանագրել, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար: Նույն որոշմամբ դատարանն ակնհայտ անհիմն համարելու հիմք է դիտարկել սահմանադրական դիմում ներկայացնելու իրավունքի չարաշահումը: Վերջինս, մեր կարծիքով, պետք է իր օրենսդրական ամրագրումն ստանա ոչ միայն օրենքով, այլ նաև ՀՀ Սահմանադրությամբ: Կարևոր է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 19 նոյեմբերի 2013 թվականի ՄԴՌ-1124 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ եթե Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, ապա այդ հարցն այլ իրավական ակտի վիճարկման շրջանակներում այլևս չի կարող քննության առարկա դառնալ սահմանադրական դատարանում: Կարծում ենք, որ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում կհստակեցնի այս իրավական դիրքորոշման կիրառման շրջանակները, և այն խոչընդոտ չի հանդիսանա անհատական սահմանադրական դիմում ներկայացնելու համար: Հաճախ սահմանադրական դատարանի առջև բարձրացվող հարցը կարող է կարգավորված լինել մի շարք նորմատիվ իրավական ակտերով: Այդպիսի օրինակ կարող է ծառայել արդար դատաքննության սահմանադրական իրավունքի երաշխավորմանն ուղղված նորմերը, որոնք իրենց ամրագրում են ստանում ՀՀ քրեական, քաղաքացիական և վարչա-

կան դատավարության օրենսգրքերում: Եւ նշված օրենսգրքերից մեկի նորմերի վիճարկման դեպքում հարցի քննարկումը չպետք է խոչընդոտ հանդիսանա այլ օրենսգրքերով ամրագրված նորմերի վիճարկման համար, եթե դրանք կիրառվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ և նրանց համար առաջացնում են որոշակի իրավական կամ փաստացի հետևանքներ:

• ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը» դրույթի գործնականում երաշխավորման պարտականությունը դրված է, ի թիվս այլ պետական մարմինների, նաև դատարանների վրա՝ իրենց իրավասությունների շրջանակներում: Դատարաններն արդարադատություն իրականացնելիս պարտավոր են նաև նկատի առնել կիրառման ենթակա օրենքի սահմանադրականությունը, իսկ Սահմանադրությանը հակասելու որևէ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում դիմել սահմանադրական դատարան, հակառակ պարագայում՝ կիրառել օրենքի դրույթը: Դատարաններն իրավասու չեն օրենսդրի կողմից ընդունված օրենքի պահանջն անտեսել լայն հայեցողության արդյունքում, քանի որ նրանց վրա դրված է օրենքներին համապատասխան արդարադատություն իրականացնելու պարտականություն: Սահմանադրության նորմի անմիջական գործողությունը չի կարող ընկալվել որպես Սահմանադրության որևէ դրույթի ձևակերպման մեխանիկական վերարտադրություն. այն ենթադրում է իրավահարաբերության կարգավորում Սահմանադրության նորմի իմաստին և տրամաբանությանը համապատասխան, ուստի օրենքով նախատեսված՝ իրավունքի իրացումը կամ սահմանադրական այլ նորմի իրացումն ապահովող իրավական միջոցների և կառուցակարգերի՝ ՀՀ Սահմանադրության համապատասխանության հարցը չի կարող սահմանադրական դատարանից բացի այլ դատարանի քննարկման առարկա դառնալ: Միայն Սահմանադրության որևէ դրույթի վկայակոչմամբ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ է առնվազն երկու պահանջի բավարարում՝

ա) օրենսդրական բացի առկայություն,

բ) կասկածի իսպառ բացակայություն, որ սահմանադրական նորմը չի ընկալվի տարակերպ և չի ձևավորվի դրա կիրառման ոչ միասնական պրակտիկա:

• Դատարանի մատչելիության սկզբունքը հաճախ ՀՀ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դիտարկվում է որպես արդարադատության մատչելիության իրավունք՝ արդար դատաքննության իրավունքի տարր: Այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանը այլ դիմումի հիման վրա կրկին անգամ քննության առարկա չի դարձնում այն հարցը, որն արդեն բարձրացվել է դատարանի առջև, միանգամայն իրավաչափ է, սակայն սա միևնույն ժամանակ կարող է արգելափակել այլ սուբյեկտներին օգտվելու սահմանադրական արդարադատության միջոցով իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Եթե նույնիսկ անձի կողմից տրված դիմումը ենթակա չէ քննության դիմումով բարձրացվող հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի ընդունած

որոշման առկայության հիմնավորմամբ, ապա դա դեռ չի նշանակում, որ անձը չպետք է օգտվի այդ որոշման իրավական հետևանքներից: Հետևաբար գտնում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում պետք է լրացումներ կատարվեն, որոնցով կամրագրվի, որ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց անհատական սահմանադրական դիմումի հիման վրա դատական կազմը, մերժելով գործը քննության ընդունել, միաժամանակ կարող է գնահատել նորմի կիրառման իրավաչափությունը և փաստել, որ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչը նոր միայն կհանդիսանա նոր հանգամանք դատական ակտը վերանայելու համար:

- Հաճախ օրենքները հետ են մնում հասարակական հարաբերությունների զարգացման տրամաբանությունից, չեն արտահայտում առկա հասարակական պահանջները, օրենսդիրը չի կարողանում ժամանակին և պատշաճ որակով արձագանքել՝ փոփոխել կամ վերացնել ոչ անհրաժեշտ կարգավորումները: Այս իրավիճակներում արդեն ավելի սուր է դրվում օրենքի նպատակահարմարության հարցը: Գտնում ենք, որ թեև օրինականության սկզբունքը դրվում է սահմանադրական դատարանի գործունեության հիմքում, բայց այստեղ խոսք է գնում ոչ թե ցանկացած օրենքի, այլ իրավական օրենքի պահանջների անշեղորեն հետևելու պարտականության մասին: Սահմանադրական դատարանը կարող է իր գործունեության ընթացքում մինչև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի դրույթի կիրառումը գնահատել դրա սահմանադրականությունը և որոշել դրա կիրառման նպատակահարմարությունը:

- Սահմանադրական դատավարությունում մրցակցությունը դրսևորվում է ավելի քիչ, քան դատավարության այլ տեսակներում: Սահմանադրական դատավարության համար կարևոր է հստակեցնել, թե արդյոք մեկ կամ երկու սկզբունք է ամրագրված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում: Մեր կողմի իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ խոսք է գնում բացառապես իրավահավասարության սկզբունքի մասին: Սահմանադրական դատավարության շրջանակներում առավելապես կիրառելի է կողմերի իրավահավասարության սկզբունքը, որը երաշխավորում է կողմերին հավասար հնարավորություններ ամբողջությամբ ներկայացնելու իրենց իրավական դիրքորոշումը սահմանադրաիրավական վեճի առնչությամբ: Մրցակցության սկզբունքը խիստ սահմանափակ և պայմանական կիրառում ունի սահմանադրական դատավարության շրջանակներում: Սահմանադրական դատարանն արձագանքում է միայն այն դիմումներին, որոնք ստանում է: Այս իմաստով սահմանադրական դատավարությունում մրցակցությունը նշանակում է, որ դատաքննությունն իրականացվում է որոշակի սուբյեկտների նախաձեռնությամբ, բայց ոչ սահմանադրական դատարանի կողմից:

- Գործի քննության ժամանակ սահմանադրական դատարանի ակտիվ դերի մասին է խոսում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի ամրագրումը: Այս

սկզբունքի հիման վրա սահմանադրական դատարանը հնարավորություն ունի նաև ճշգրտումներ կատարել սահմանադրական դատավարության կանոնների մեջ: Բացի վերը նշվածից, նաև գտնում ենք, որ ի պաշտոնե գործի հանգամանքները պարզելու սկզբունքի բովանդակության մաս են կազմում օբյեկտիվության, բազմակողմանիության և լրիվության սկզբունքները, որոնք օրենսդրական ամրագրում չեն ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում: Այս սկզբունքն ունի հատուկ նշանակություն սահմանադրական դատավարության համար, քանի որ, ի տարբերություն դատավարությունների այլ տեսակների, այստեղ չի նախատեսվում ընդունված որոշման վերանայման հնարավորություն: Դիտարկվող սկզբունքը սերտորեն կապված է դատավորների դատավարական ակտիվության հետ:

- Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը պետք է ունենա երեք միասնական իրավական հետևանք: Այն, առաջին հերթին, պետք է լինի բոլորի օբյեկտիվ իրավունքի պաշտպանության երաշխիք, երկրորդ՝ պետք է պաշտպանի սահմանադրական դատարան դիմած կոնկրետ անձի սուբյեկտիվ իրավունքը, երրորդ՝ իրավաստեղծողի և իրավակիրառողի համար դառնա իրավունքի աղբյուր՝ խաղալով ուղղորդող դեր իրավունքի զարգացման համար: Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում, ինչպես նաև եզրափակիչ մասում արտահայտված իրավական դիրքորոշումները նույնպես պարտադիր են բոլոր իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատարանների համար:

Սահմանադրական դատարանի որոշումների հնարավոր չկատարման պատճառների վերլուծությունը ցույց է տվել որոշումների կատարման արդյունավետության մշտադիտարկման անհրաժեշտությունը: Սահմանադրական դատարանների որոշումների կատարման արդյունավետության բարձրացման հարցում կարող են էական ազդեցություն ունենալ այնպիսի գործընթացները, ինչպիսիք են սահմանադրական ախտորոշումը և սահմանադրական մշտադիտարկումը:

- ՀՀ սահմանադրական դատարանի ըստ էության բոլոր որոշումներով սահմանադրական դատարանը մեկնաբանում է և՛ Սահմանադրության նորմը, և՛ օրենքի վիճարկվող դրույթը՝ կիրառելով մեկնաբանման բազմաթիվ մեթոդներ, ուսումնասիրում է իրավակիրառական պրակտիկան, որից հետո միայն ձևակերպում սահմանադրաիրավական վեճի վերաբերյալ իր դիրքորոշումը՝ ներկայացնելով նաև այն իրավական փաստարկները, որոնք դրվում են իրավական դիրքորոշումների հիմքում: Մեկնաբանող որոշումը պետք է լինի հիմնավորված որոշում: Նման որոշումները հիմնավորվում են մեկնաբանման չափորոշիչներ կիրառելու և/կամ դրանց հիման վրա գնահատականներ տալու ճանապարհով: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը չի կանոնակարգում, թե փաստարկման ինչ տեսակներից պետք է օգտվի սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրական դատարանը,

կիրառելով մեկնաբանման բազմաթիվ մեթոդներ, որպես կանոն կիրառում է բովանդակային փաստարկման տեսակը, որը նրան հնարավորություն է տալիս առավել ամբողջական անդրադառնալ սահմանադրաիրավական վեճի լուծմանը: Սահմանադրական դատարանը կիրառում է ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային փաստարկներ: Սակայն այդ փաստարկները պետք է ուղղված լինեն ոչ թե օրենքի դրույթը կոնկրետ իրավիճակին հարմարեցնելուն, այլ դրույթը մեկնաբանելուն, որը հավասարապես կիրառելի կլինի այլ իրավիճակների նկատմամբ: Սահմանադրական դատարանը, ելնելով իր կողմից լուծվող խնդիրների առանձնահատկություններից, իր որոշումներում կիրառում է բովանդակային փաստարկման տեսակը, քանի որ նրա համար անխուսափելի է իրավական նորմերի մեկնաբանումը, սահմանադրական դատարանն ինքն է որոշում կիրառվող փաստարկների շրջանակը՝ հստակեցնելով լուծման ենթակա խնդիրները: Դատարանի կողմից կիրառվող փաստարկներից յուրաքանչյուրն իր նշանակություն ունի իրավական համակարգի համար և ուղղված է կոնկրետ հասցեատիրոջ: Դատողությունների երեք հիմնական տեսակ պետք է տարբերակվի՝ նկարագրական, գնահատողական և խրախուսող: Նկարագրողական դատողությունները նկարագրում են փաստերը կամ երևույթները: Գնահատողական դատողություններն արտահայտում են որոշակի գնահատական փաստերի կամ երևույթների վերաբերյալ: Խրախուսող դատողությունները մեզ կոչ են անում կանխել որոշակի երևույթ կամ գործողության ուղղվածություն: Կարծում ենք, որ երրորդ խմբի մեջ մտնում են ոչ միայն որոշակի վարքագիծ կանխելու կոչերը, այլ նաև որոշակի ակտիվ վարքագիծ դրսևորելու կոչերը:

- Իրավակիրառական պրակտիկայի կարևորագույն տարրերից մեկը հանդիսանում է իրավական նորմի կիրառման նախադեպը, որն ընդհանրացված տեսքով իրենից ներկայացնում է իրավունքի որոշակի նորմերի ընկալման և կիրառման վերաբերյալ իրավաբանական պրակտիկայում մշակված ստանդարտացված կանոն, որը դրսևորվում է 1) միասեռ կատեգորիայի գործերով այս կամ այն նորմը՝ դրա տեղի ունեցած սկզբունքային մեկնաբանման համատեքստում ստանդարտացված տիպային լայնատարած կիրառելու կամ 2) միասեռ կատեգորիայի գործերը լուծելիս նորմերի՝ տարբերայնորեն ձևավորված և աստիճանաբար նույնականացված կիրառումը կոնկրետ գործով իրավունքի կիրառման անհատական ակտում դրան պաշտոնական հեղինակավոր մեկնաբանություն տալու կամ 3) միասեռ գործերով ապացույցների նվազագույն թույլատրելի համակցության, գործի լուծման համար էական հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողության և, վերջին հաշվով, իրավակիրառական գործի փաստացի հիմքի իրավաբանական որակման համար դրանց բավարար և որակյալ լինելու պահանջներ մշակելու մեջ: Իրավակիրառական պրակտիկայի եզրափակիչ տարրն իրավակիրառական գործունեության սովորությունն է, որն իրենից ներկայացնում է դատարանի (դատավորի), իրավունքը կիրառող այլ մարմնի կամ պաշտոնատար անձի ստերեոտիպային, բազմաթիվ անգամներ կրկնվող վարքագիծ, որը կապված է իրենց էա-

կան հատկանիշներով համընկնող իրավակիրառական իրավիճակների լուծման նպատակով իրավական նորմերի իրացման հետ: Ընդ որում, իրավակիրառողների այս համընդհանուր ընդունված վարքագիծը հիմնվում է իրավական նորմերի ձևավորված մեկնաբանության կամ դրանց բացերը և անհստակությունները լրացնելու վրա, որոնք ամփոփված են սովորույթի մեջ և ստացել են իրավադրույթի կարգավիճակ: Իրավակիրառական պրակտիկայի սովորությունը, որպես կանոն, ձևավորվում է բարձրագույն դատական ատյանների պրակտիկայում, ինչպիսիք են, օրինակ, սահմանադրական դատարանը, վճռաբեկ դատարանը և այլն:

Օրենքի դրույթների սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանը ոչ միայն կարող է, այլ նաև պարտավոր է գնահատել իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակությունը, պարզել, թե ինչպես է իրավակիրառողն օրենքը մատուցում անձանց, ում վրա տարածվում է այդ օրենքի գործողությունը:

- Սահմանադրական դատարանի դատավորների հատուկ կարծիքներն ունեն մի շարք դրական հատկանիշներ, որոնք ներկայացնում են հատուկ կարծիքները որպես դոկտրինալ սահմանադրական մեկնաբանման աղբյուր: Առաջին հերթին, այն երաշխավորում է դատավորի կամքի ազատ արտահայտումը, նրա անկախությունը և այլ դատավորների հետ հավասար իրավունքները: Երկրորդ՝ հատուկ կարծիքը նպաստում է ճշմարտությունը փնտրելուն և Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման պրակտիկայի զարգացման նոր մոտեցումներ ձևավորելուն: Երրորդ՝ հատուկ կարծիքները թույլ են տալիս հետազայում բարելավել գործով դատարանի որոշման պատճառաբանական մասը: Չորրորդ՝ նախապայմաններ են ստեղծում հիմնախնդիրը խորն ուսումնասիրելու, գիտական դոկտրինաներ ձևավորելու համար: Սահմանադրական իրավունքում հատուկ կարծիքները կարող են խաղալ բացառիկ օգտակար դեր մարդու իրավունքների հիմնախնդիրների լուծման հետ կապված:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Իրավակիրառական պրակտիկայի սահմանադրաիրավական բովանդակությունը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի իմաստով, «Արդարադատություն» գիտական հանդես, 2011, 4(15), էջեր 17-21:

2. Դատարանները՝ որպես սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ, ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2013, 1(67), էջեր 5-17:

3. Սահմանադրական դատարանի հավասար մատչելիությունը՝ որպես սահմանադրական արդարադատության սկզբունքներից մեկը, օրենսդրական կարգավորման հիմնախնդիրներ, «Արդարադատություն» գիտական հանդես, 2013, 2(21), էջեր 11-16:

4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատավարության որոշ հիմնահարցեր, «Արդարադատություն» գիտական հանդես, 2014, 4(27), էջեր 51-59:

АРАКЕЛЯН САМВЕЛ КНЯЗЕВИЧ

**ОСОБЕННОСТИ КОНСТИТУЦИОННОГО СУДОПРОИЗВОДСТВА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

РЕЗЮМЕ

Конституционное судопроизводство Республики Армения (РА) имеет ряд особенностей, благодаря чему получает статус отдельного вида судопроизводства.

После конституционных поправок 2005 года расширился круг субъектов, имеющих право обратиться в Конституционный Суд, а в Закон РА «О Конституционном Суде» были внесены изменения, предусматривающие новые особенности рассмотрения дела в Конституционном Суде. Вместе с внесением изменений в законодательство возникли и новые проблемные вопросы как в правоприменительной практике, так и в области юридической науки.

Изменение законодательного регулирования вызвало необходимость детального изучения особенностей конституционного судопроизводства (в частности, особенностей его этапов, специфики принципов, лежащих в его основе, и природы их реализации, статуса субъектов обращения в Конституционный Суд), выявления проблем его нормативного регулирования и поиска соответствующих эффективных решений этих проблем. Это и обусловило актуальность темы данного диссертационного исследования.

В соответствии с поставленной целью, на основе комплексного изучения теоретических подходов и правоприменительной практики в своей диссертации автор выявляет проблемы правового регулирования правоотношений в сфере конституционного судопроизводства, а также выдвигает и обосновывает практические предложения, направленные на совершенствование конституционного судопроизводства в РА. В результате выполнения исследовательских задач, направленных на достижение поставленной цели, автором были сформулированы следующие выводы и обобщения.

В частности, на основе изучения и обобщения имеющихся в юридической науке дефиниций понятия «конституционное судопроизводство», диссертантом было предложено авторское определение данного понятия.

Исследовав основные этапы конституционного судопроизводства, автор приходит к выводу о необходимости рассмотрения исполнения решений

Конституционного Суда в качестве одного из неотъемлемых этапов этого процесса. В диссертации подчеркивается важность такого подхода для достижения эффективности конституционного судопроизводства.

Также в своей работе диссертант уделяет внимание рассмотрению особенностей конституционного судопроизводства на основе индивидуальной жалобы, выявляя при этом существующие проблемы законодательного регулирования этого института. Автором предложены возможные пути преодоления выявленных проблем и совершенствования национального законодательства.

Исследовав правовой статус судов общей юрисдикции как субъектов обращения в Конституционный Суд, диссертант приходит к заключению, что такое обращение является обязанностью судов, а не их свободным усмотрением, поскольку служит реализации функции судов по обеспечению верховенства Конституции.

Автор выявляет особенности принципов, лежащих в основе конституционного судопроизводства, а также исследует специфическую природу их реализации. В диссертации предложено дополнительно закрепить на законодательном уровне ряд принципов конституционного судопроизводства (в частности, такие как принцип доступности Конституционного Суда, всесторонности и полноты исследования материалов дела).

Диссертант анализирует особенности юридической аргументации в решениях Конституционного Суда и выделяет виды применяемых Судом аргументационных подходов. Также автор исследует влияние аргументации в решениях Конституционного Суда на эффективность конституционного судопроизводства в целом, выявляет значение отдельных видов аргументационных подходов для субъектов национальной правовой системы.

На сегодняшний день законодательно предусмотрено, что в процессе рассмотрения дела Конституционный Суд обязан не только проанализировать соответствующий нормативный акт, подлежащий контролю, но и изучить практику его применения. Вместе с тем, закон не определяет содержание и объем понятия «правоприменительная практика»; не существует однозначного определения этого понятия и в правовой доктрине. В связи с этим, в заключение своего исследования автор формулирует собственное определение правоприменительной практики как объекта оценки со стороны Конституционного Суда.

ARAKELYAN SAMVEL

PARTICULARITIES OF CONSTITUTIONAL PROCEEDINGS IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

Due to its specific features, the constitutional proceedings of the Republic of Armenia (RA) obtain the status of the separate type of judicial proceedings.

After the constitutional amendments of 2005, the range of subjects having the right to appeal to the Constitutional Court expanded; and the Law of RA “On the Constitutional Court of the Republic of Armenia” was amended so as to introduce new specific features of adjudicating the case in the Constitutional Court. The legislative changes provoked the new problematic questions in both law application practice and legal scholarship.

The development of legislative regulation brought about the necessity of deep and thorough examination of particularities of the constitutional proceedings (in particular, its stages, fundamental principles and the specific nature of their implementation, the status of the subjects having the right to appeal to the Constitutional Court etc.), revealing the problems of such regulation and finding the ways of their effective overcoming. This determined the topicality of the present dissertational research.

In accordance with the objective of the research and on the basis of comprehensive studying of the doctrinal approaches and law application practice, in his dissertation the author reveals the problems of legal regulation of the relations in the field of constitutional proceedings, as well as formulates and justifies the practical proposals aiming at the improvement of constitutional proceeding in RA. The implementation of the research tasks allowed the author to reach the following conclusions and generalizations.

In particular, on the basis of studying of the definitions of the concept of “constitutional proceedings” given in today’s legal scholarship, the author formulates his original definition of this concept.

Having studied the stages of the constitutional proceedings, the author concludes that it is necessary to consider the implementation of the decisions of the Constitutional Court as one of the integral phases of this process. In his dissertation, the author underlines the importance of such approach for achieving the efficiency of constitutional proceedings.

Furthermore, in his study the author pays attention to the particularities of the constitutional proceedings initiated on the grounds of individual complaint; the author reveals the problematic issues of legislative regulation of this institute and proposes the ways to overcome such problems and improve the national legislation.

Having examined the legal status of the courts of general jurisdiction as the subjects of appealing to the Constitutional Court, the author concludes that such appeal is the obligation, not the discretion of the courts, because it serves the implementation of the function of judiciary to guarantee the supremacy of the Constitution.

The author identifies the particularities of the fundamental principles of constitutional proceedings, as well as examines the specific nature of their implementation. In the dissertation, it is proposed to amend the national legislation by introducing the provisions setting out the additional principles of constitutional proceedings (in particular, the principles of access to the Constitutional Court, comprehensiveness and completeness of examination of the case materials).

The author analyses the specific features of legal argumentation and reasoning in the decisions of the Constitutional Court and classifies the argumentation approaches applied by the Court. He studies the influence of the argumentation in the Constitutional Court decisions on the efficiency of the constitutional proceedings as a whole and reveals the significance of particular types of argumentation for the subjects of national legal system.

The current national legislation stipulates that in the course of adjudicating the case, not only must the Constitutional Court analyze the legislative act subject to control, but also examine the practice of its application. At the same time, the definition of the concept of “law application practice” is not provided; furthermore, there is no uniform approach to defining this concept in legal scholarship. Taking this into account, in the final part of his study, the author formulates his original definition of the “law application practice” as the object of examination and assessment by the Constitutional Court.